## ‹‹ՄԵԼԼԱԹ ԲԱՆԿ›› ՓԲԸ-Ի ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ‹‹ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ›› ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 19 մայիսի 2020 թվական

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն ու 287-Ն որոշումները՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս Սոցիալական ապահովության ծառայության պետ Անի Ամիրշադյանի (հիմք՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից 30.03.2020 թվականի տրված թիվ Ն/ՍԱԾ/8605-2020 լիազորագիրը) (այսուհետ՝ Նախարարություն), և ‹‹Մելլաթ բանկ›› ՓԲԸ-ը, ի դեմս գործադիր տնօրեն Սեյեդ Ղոլամռեզա Մուսավիի (այսուհետ՝ Բանկ) (միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **2020 թվականի հուլիսի 1-ից** լուծել Նախարարության (Սոցիալական ապահովության ծառայության) և Բանկի միջև կնքված ‹‹Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման մասին›› պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա անբաժանելի մասը կազմող բոլոր համաձայնագրերը:

2. Պայմանագրի լուծելու օրվա դրությամբ դրանցով ստանձնած պարտավորությունները Բանկի կողմից պատշաճ կատարելու համար սահմանել հետևյալ ժամկետները՝

2.1. ‹‹Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման մասին›› պայմանագրի դեպքում՝ մինչև Բանկի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 2.3.8-րդ ենթակետում նշված տեղեկատվության (1.2.2-րդ ենթակետում նշված պահանջը չկատարած անձանց տվյալները) վերջին անգամ լիազոր մարմնին տրամադրելու ամիսը՝ ներառյալ, ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 287 որոշման 3-րդ կետի 5-10-րդ ենթակետերում նշված գումարների համար, **իսկ ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284 որոշման շրջանակներում՝** ժամկետը սահմանել 2020 թվականի հոկտեմբերի 1-ը՝ մինչև

Բանկի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշման N 2 հավելվածի 2.3.5-րդ ենթակետում նշված տեղեկատվությունը (1.2.2-րդ ենթակետում նշված պահանջը չկատարած անձանց տվյալները) վերջին անգամ լիազոր մարմնին տրամադրելու ամիսը ներառյալ:

3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից:

4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն | ‹‹Մելլաթ բանկ›› ՓԲԸ |
| Գտնվելու վայրը՝ ՀՀ, քաղ. Երևան, Նալբանդյան 13 | Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 5Ա, 45 տարածք |
| Հեռ. 060-654-002 | Հեռ. 060-38-88-88 |
| Էլ. փոստ info@ssa.am | Էլ. փոստ info@mellatbank.am<br>ՀՎՀՀ 02501718 |
| **Սոցիալական ապահովության ծառայության պետ**<br>**Անի Ամիրշադյան** | **Գործադիր տնօրեն**<br>**Սեյեդ Ղոլամռեզա Մուսավի** |
| (ստորագրություն և կնիք) | (ստորագրություն և կնիք) |